

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

ԾՆՈՒՆԴԻ ԾՆՈՐՀԱՎՈՐ ԵՐԵՎԱՆ 2797



Այս համարում

Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արևմտյան Հայաստան.....	8
3- Մփյուռք.....	9
4- Միջազգային.....	10
5- Հասարակական.....	11
6- Խոհեր.....	14
7- Գժանկարչություն.....	15
8- Առածանի.....	15

Պարսկերեն բաժին

1- Հայ գրականություն.....	1-5
---------------------------	-----

Ճապիկի առաջին էջում՝ Երևան 2797

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 204, Հոկտեմբեր 2015 թ.

No. 204, October 2015

ماهنامه لویس - شماره ۲۰۴ آبان ماه ۱۳۹۴

LՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «LՈՒՅՍ» - ին

Երևանն նշեց իր 2797-ամյակը՝ «Իմ ջերմ ու բարի քաղաք» խորագրով



Երևանն հոկտեմբերի 11-ին նշեց իր հիմնադրման 2797-ամյակը, որն այս տարի կանցնի «Իմ ջերմ ու բարի քաղաք» խորագրի ներքո:

Մայրաքաղաքում միջոցառումները մեկնարկել էին առավոտյան ժամը 10:00-ին՝ «Մանիթեք» ընկերության նոր ու ժամանակակից ջրգան մեքենաների շքերթով:

Տոնի առիթով հատուկ զարդարված ջրգանների առավոտյան երթը մայրաքաղաքի գլխավոր ու երկրորդական փողոցներում սկսվել է ձայնային ազդանշաններով և վերածվել յուրատեսակ շքերթի, որով էլ, ըստ էության, մեկնարկել է «Իմ ջերմ ու բարի քաղաք» կարգախոսով «Էրեբունի-Երևան-2797» -ի տոնակատարության երկրորդ օրը:

Այս տարի ինչպես նախորդ տարիներին, միջոցառումների շրջանակում ներառված են սոցիալական ուղղվածության մի շարք նպատակային ծրագրեր:

«Էրեբունի-Երևան-2797» տոնակատարությունների համար Երևանի ավագանին հատկացրել է 130 մլն դրամ, շուրջ 30 մլն դրամ էլ նվիրաբերել են տարբեր անձինք:

Նշենք, որ «Էրեբունի-Երևան» տոնը կոչվում է նաև «Երևանի տոն», «Երևանի օր». 1983 թ-ից դարձել է ավանդական (չի նշվել միայն 1991–98 թթ-ին):

«Էրեբունի-Երևան» տոնակատարության համար 1968 թ-ին հատուկ գրվել է «Էրեբունի-Երևան» երգը (խոսքը՝ Պարույր Սեւակի, երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյանի), որը հետագայում դարձել է քաղաքի օրհներգը: Այդ երգն առաջին անգամ կատարվել է 2750 հոգուց բաղկացած երգչախմբով՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ:

Առաջին տոնակատարության ժամանակ Հանրապետության հրապարակի մերձակա զբոսայգում բացվել է նաև 2750 ցայտաղբյուրներից բաղկացած շատրվանների համալիրը:

Քաղաքի տոնը սովորաբար նշվում է հոկտեմբերի 10–11-ին:

2008 թ-ին մեծ շուքով նշվել է քաղաքի հիմնադրման 2790-ամյակը:

Հայաստան

Հայաստանը ողջունում է Պարագվայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը. Նալբանդյան



Հայաստանը ողջունում է Պարագվայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

«Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շարունակական ընդլայնումը վկայում է, որ մարդկության դեմ իրականացված հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն, եւ Հայոց ցեղասպանությունից նույնիսկ հարյուր տարի անց մարդկությունը շարունակում է ճանաչել եւ դատապարտել այդ ոճրագործությունը:

Այս քայլով Պարագվայի Սենատը կարևոր ներդրում կատարեց ցեղասպանությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման միջազգային ջանքերում», - ընդգծել է նախարարը:

Ավելի վաղ [NEWS.am](#)-ը հայտնել էր, որ հոկտեմբերի 29-ին, Պարագվայի Սենատը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը:

«Պարագվայի Հանրապետության Սենատը ճանաչում է 1915-1923 թվականներին Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը՝ այդպիսով հիշատակելով մարդկության դեմ իրագործված այդ հանցագործության 100-րդ տարելիցը»,-ասված է փաստաթղթում:

Ավելի վաղ սենատորներին ուղերձով դիմել էր Սենատի պատվավոր նախագահ Մարիո Աբդո Բենիտեսը:

Իշխանություններն ամեն ինչ արեցին՝ «Հոկտեմբերի 27»-ի գործը կոծկելու համար. Ստեփան Դեմիրճյան

Իշխանություններն ամեն ինչ արեցին՝ «Հոկտեմբերի 27»-ի գործը կոծկելու համար եւ այս իշխանությունների օրոք այն չի բացահայտվելու: Այսօր՝ հոկտեմբերի 27-ին, Ազգային ժողովում լրագրողների հետ գրույցի ժամանակ նման համոզմունք հայտնեց 16 տարի առաջ Հայաստանի խորհրդարանում սպանված՝ խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանի որդին՝ Ստեփան Դեմիրճյանը, ով այսօր ՀԱԿ խմբակցության պատգամավոր է:

«Իշխանություններն ամեն ինչ արեցին՝ գործը կոծկելու համար: Համոզված եմ, որ այս իշխանությունների օրոք գործը չի բացահայտվելու: Կարծում եմ, որ եթե չլիներ

«Հոկտեմբերի 27»-ը, կլիներ այլ Հայաստան», - ասաց Ստեփան Դեմիրճյանը:



ՀԱԿ խմբակցության պատգամավորի խոսքով՝ 16 տարի առաջ տեղի ունեցած ոճրագործությունը մեծ հարված է հասցրել Հայաստանին, եւ հետեւանքներն առ այսօր զգացվում է:

Հիշեցնենք, որ 1999թ. հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Մարգարյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

ՄԻԵԴ-ը մերժեց Շվեյցարիային. Ցեղասպանության վերաբերյալ հայկական դիրքորոշումը հաղթեց

ԵԻՄ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատն այսօր՝ հոկտեմբերի 15-ին, վճիռ է կայացրել Փերինչեքը Շվեյցարիայի դեմ դատական գործի վերաբերյալ:

Դատավորները որոշել են, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի 10-րդ հոդվածի խախտում եւ այդ հիմքով մերժել են Շվեյցարիայի հայցը:

Որոշման մեջ նաեւ նշվում է, որ ՄԻԵԴ-ից չի պահանջվում սահմանել՝ արդյոք 1915թ. Օսմանյան Կայսրությունում տեղի ունեցած հայ ժողովրդի կոտորածներն ու զանգվածային տեղահանությունը կարող են բնութագրվել որպես Ցեղասպանություն, եւ որ ՄԻԵԴ-ը իրավասություն չունի այս հարցի վերաբերյալ իրավական ուժ ունեցող զնահատական տալ:

Նշենք, որ նախորդ՝ Ստորին պալատի որոշման մեջ Հայոց ցեղասպանությունը բնութագրվել էր որպես պատմական վիճելի փաստ, ինչն էլ որպես երրորդ կողմ վիճարկում էր Հայաստանի Հանրապետությունը: ՄԻԵԴ-ում մեր երկրի

իրավունքները պաշտպանել են հայտնի փաստաբաններ Ջեֆրի Ռոբերտսոնը, Ամալ Ռամզի Կլունին, Թոբի Քոլիսը: Հիշեցնենք, որ 2008թ. Ծվեյցարիայի դատարաններից մեկը դատապարտել էր Թուրքիայի աշխատավորական կուսակցության առաջնորդ Դոդու Փերինչեքին Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար: Փերինչեքը դիմել էր ՄԻԵԴ, եւ 2013թ. Եվրոպական դատարանի ստորին պալատը որոշել էր, որ Ծվեյցարիայի դատարանի վճիռը Մարդու իրավունքների կոնվենցիայի 10-րդ հոդվածի ոտնահարում է: Ծվեյցարիայի կառավարությունն իր հերթին դիմել էր ՄԻԵԴ՝ գործը ՄԻԵԴ Մեծ պալատ փոխանցելու խնդրանքով, որը 2014թ. բավարարվել էր: Հունվարի 28-ին ՄԻԵԴ-ի Մեծ պալատում տեղի են ունեցել «Փերինչեքն ընդդեմ Ծվեյցարիայի» գործով դատական լսումները:

Ռոբերթսոն եւ Քլունի. ՄԻԵԴ որոշումը հաղթանակ է Հայաստանի համար



«Փերինչեքն ընդդեմ Ծվեյցարիայի» գործում Հայաստանը որպես երրորդ կողմ ներկայացնող փաստաբաններ Ջեֆրի Ռոբերթսոնն ու Ամալ Քլունին կարծում են, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «հաղթանակ է Հայաստանի համար»:

Փաստաբանների տարածած հայտարարության մեջ նշվում է, որ իրենք գոհ են այն փաստի առիթով, որ Հայաստանի կառավարության անունից ներկայացված փաստարկներն աջակցություն են գտել: «Հայաստանը գործին խառնվեց միայն մեկ պատճառով. ստորին աստիճանի դատարանը կասկածի տակ էր դրել փաստը, որ 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն է իրականացվել: Որպես փաստաբան՝ մենք ձգտում էինք ուղղել այդ լուրջ սխալը, եւ Գերագույն պալատն արեց դա: Այսօրվա դատը չի վիճարկում հայոց ցեղասպանության փաստը. տասը դատավորներն ասացին, որ հարցն ընդհանրապես չի դիտարկվելու, իսկ յոթ դատավորներ էլ հայտարարեցին, որ Հայոց ցեղասպանությունը հստակ պատմական փաստ է», - ասված է հայտարարությունում:

Բացի այդ, այս որոշումը սատարում է իրենց արժանապատվությունը պաշտպանելու հայերի իրավունքը: Փաստաբանների կարծիքով, դատարանի այսօրվա որոշումը, որը պնդում է արտահայտման ազատության կարեւորությունը, լուրջ հետեւանքներ ունի Թուրքիայի համար, որը խոսքի ազատության տեսանկյունից վատագույն վարկանիշն ունի ՄԻԵԴ-ի բոլոր երկրների շրջանում: Թուրքիան այլեւս չի կարողանա արդարացնել այնպիսի անձանց դեմ դատական հետապնդումները,

ինչպիսին է Հրանտ Դիքը, որոնց մեղադրում է «թուրք ժողովրդին վիրավորելու մեջ»:

«Այդպիսի հետապնդումներն ակնհայտորեն հակասում են Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության սկզբունքին՝ Փերինչեքի գործի մեկնաբանությամբ: Մենք Թուրքիային կոչ ենք անում չեղյալ հայտարարել 301 հոդվածը եւ դադարեցնել հետապնդումները», - հայտարարել են նրանք:

Նրանց կարծիքով, Փերինչեքը «սադրիչ է, որին չի կարելի գոհ համարել, ինչին նա այդքան ձգտում էր»: Ռոբերթսոնն ու Քլունին նշել են, որ դատարանը մերժել է 120 հազար եվրոյի չափով փոխհատուցման մասին նրա պահանջը, ավելին, ոչ ոք չի վճարի նաեւ նրա դատական ծախսերը:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Գերագույն պալատը հրապարակեց «Փերինչեքն ընդդեմ Ծվեյցարիայի» գործով վճիռը:

Որոշման մեջ նշվում է, որ ՄԻԵԴ-ից չի պահանջվում սահմանում տալ, որ 1915 թվականին Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի կոտորածներն ու զանգվածային տեղահանությունը կարող է որպես Ցեղասպանություն բնորոշվել, եւ որ ՄԻԵԴ-ն իրավասու չէ այդ հարցին իրավաբանական ուժ ունեցող գնահատական տալ:

Նշենք, որ Ստորին պալատի որոշման մեջ Հայոց ցեղասպանությունը բնորոշվել էր որպես պատմականորեն վիճելի փաստ: Հենց այդ որոշումն էր Հայաստանի Հանրապետությունը վիճարկում որպես երրորդ կողմ:

Տիգրանակերտի պեղումներից 10 տարի անց. ինչու ՀՀ իշխանությունները չեն ֆինանսավորում հնագետներին



Արցախի Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար, հնագետ Համետ Պետրոսյանը NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում ամփոփել է 10 տարվա պեղումների արդյունքները:

Պարոն Պետրոսյան, արդեն 10 տարի պեղումներ են իրականացվում Տիգրանակերտում: Գո՞հ եք արդյունքներից:

Որոշ չափով այո: Առաջին տարիների պեղումները ցույց են տվել, որ մենք գործ ունենք հզոր մշակութային ֆենոմենի հետ: Շատ լավ է, որ բացված պատերը, կառույցները ցույց են տալիս քաղաք, որը ոչ միայն դասական քաղաքակրթական ոճով է կառուցվել, այլև մեծ մասամբ պահպանվել է:

Ցավոք, Տիգրանակերտում այդպես էլ չկարողացանք աշխատել այնպես, ինչպես աշխարհում ընդունված բազմաթիվ նման դեպքերում է, երբ պեղությունը հատուկ քաղաքականություն է վարում՝ կարևորելով, որ այն պետք

Է շատ արագ մանրամասնորեն ներկայացվի աշխարհին, դառնա մշակութային քաղաքականության հիմնադրերից մեկը: Այս առումով գոհ չեմ:

Մակայն չպետք է մոռանանք, որ մեզ ֆինանսավորում են Արցախի իշխանությունները, որոնք տարեկան միջինը 20 մլն դրամ են տրամադրում: Ցանկացած մեկը քմծիծաղ կտա գումարների վրա, որոնք ծախսվել են պեղումներն ու հետազոտություններն իրականացնելու վրա:

Դժգոհ չեմ, երեւի սա է մեր իշխանության կարելիությունը, գուցե ինչ որ տեղ էլ մեր հասարակության մեջ մշակույթի դերակատարման կարելիության գնահատականը: Ես ավելին չեմ կարող ասել:

Մյուս կողմից էլ ես գիտեմ, որ տարեկան տասնապատիկ շատ ավելի մեծ գումարներ են հատկացվում մշակութային հազար ու մի այսպես կոչված նախաձեռնությունների վրա, որոնք անհետ գնում, կորում են:

Այնուամենայնիվ, 200 մլն դրամ Տիգրանակերտի վրա ծախսելով՝ մենք այսօր ունենք մի քաղաք, որն իր ընդարձակությամբ, նարտարապետությամբ, հնագիտական նյութերով, սրբազանությամբ հարյուրապատիկ ավելի մեծ ազդեցություն ունի մեր հասարակության վրա:

Միևնույն ժամանակ, ես մտածում էի՝ Տիգրանակերտն այնպիսի հայտնահործություն է, որ լրջագույնս պետք է ներկայացվեր: Այսօր մենք ավելի քիչ ենք արել, քան քաղաքն է իրեն ներկայացնում: Պետք է շնորհակալություն հայտնել Տիգրանակերտին, որ այդքան քաղաքակրթական է, դիտարժան, քան այն ջանքերին, որոնք մենք ենք թափել՝ այն դիտարժան դարձնելու համար:

Պարոն Պետրոսյան, երբ 2005թ. սկսվեցին պեղումները, հասարակությունը ոգեւորված էր, այսօր կարծես թե հետաքրքրությունը Տիգրանակերտի հանդեպ մարել է:

Չեմ կարծում, որ ոգեւորությունն այսօր պակաս է: Եթե գուտ նկատի ունենանք մարդկանց, և րանց ոգեւորությունն այսօր էլ կա: Բավական է Տիգրանակերտի տպավորությունների գիրքը՝ դրանում համոզվելու համար: Տարեկան 30-35 հազար այցելու ունի Տիգրանակերտը, որը փոքր ցուցանիշ չէ՝ հաշվի առնելով քաղաքի հեռու լինելը:

Գիտե՞ք ոնց է. մի մեծ բան գտնվեց եւ մնաց ամբողջությամբ չբացահայտված: Մենք հնարավորություն չավեցինք՝ նրան բացվելու, բացահայտվելու: Այստեղ իրոք մտորելու տեղիք կա, բայց ես չեմ զգացել, որ Տիգրանակերտն առաջ մեծ ոգեւորությամբ էր ընկալվում, հիմա պակաս ոգեւորությամբ:

Այստեղ խնդիրն այն է, որ հայկական պետությունը ծավալվել է մինչև Բուր, եւ Տիգրանը՝ որպես պետության ամենագլխավորը, մեծ նախաձեռնություններ է իրականացրել՝ ներառելով նաեւ Փոքրասիական եւ մերձավորարևելյան քաղաքակրթության ամբողջ ներուժը: Այսինքն, սա միայն դարաբաղցիների կամ հայերի ստեղծագործությունը չէ, հենց սա մենք չենք ներկայացրել, որ սա մարդկության մեծ ժառանգություն է, այ դրան մենք չենք հասել:



Հնարավոր չի եղել այս տարիների ընթացքում արտերկրից ֆինանսավորում ապահովել՝ Տիգրանակերտի պեղումներն ավարտելու համար:

Ինձ շատ հաճախ շփոթում են այս բնագավառի մենեջերի կամ բարեգործի հետ: Ես հնագետ եմ, ժամանակին դիմել եմ բոլոր պաշտոնյաներին՝ խնդրելով ֆինանսավորել, իսկ միջազգային կազմակերպությունները նույնիսկ դեմ են մեր պեղումներին: Ես կարող եմ նույնիսկ ասել, որ 4-5 տարի առաջ նույնիսկ մի մեծ կազմակերպություն էր ստեղծվել՝ ընդդեմ Տիգրանակերտի: Այնտեղ ներգրավված են եղել նաեւ հայ մտավորականներ, որոնք կարծում էին՝ մեր պեղումները գրավյալ տարածքներում մշակութային գործունեության ծավալում է, որի իրավունքը մենք չունենինք, Տիգրանակերտի պեղումները խանգարում են երկու ժողովուրդների հաշտություն փնտրելու հնարավորություններին:



Այսօր մենք ունենք միջազգային կազմակերպությունների անդամներ, որոնք գալիս են իրենց արձակուրդի հաշվին եւ այստեղ պեղումներ իրականացնում:

Նշեցիք, որ Տիգրանակերտի դեմ ստեղծված նախաձեռնություն կա: Ովքե՞ր են կանգնած այդ նախաձեռնության հետևում:

Այս հարցին շատ դժվար է պատասխանել, քանի որ չեմ էլ փորձել պարզել՝ ովքեր են: Այն որ կա օտարի ծառայելու միտում, դա հաստատ է: ԱՄՆ-ում կան չինովնիկներ, որոնք դեմ են եղել պեղումներին, ու այսօր այդ մարդիկ մեծ պատիվների են արժանանում Հայաստանում:

2005թ. Ձեր մի հարցազրույցում նշել էք, որ պեղումներն ամբողջությամբ ավարտելու համար 15-20 տարի է անհրաժեշտ: Արդյոք տեղավորվո՞ւմ եք ժամկետների մեջ: 5 տարի անց Տիգրանակերտն ամբողջական տեսքը կունենա՞նք:

Պեղումները կատարելու համար հետազոտողն իրեն պիտի մարդ զգա, կարգավիճակ ունենա: Օրեր առաջ նախանձով կարդացի, որ Թուրքիայում Ուրարտական հայտնի հնավայրերից մեկը պեղած անձնավորության համար իշխանությունները 10 տարով հատուկ պետական ծրագիր են մշակել: Եթե Հայաստանն էլ կիսով չափ այդպես վարվեր, բայց իրենք ասում են՝ հնավայրն Արցախում է գտնվում, իսկ Արցախի համար մենք առանց այն էլ շատ բան ենք անում: 10 տարի անց, իհարկե, մենք քաղաքն ավելի լավ ենք պատկերացնում, բայց 70 հեկտարից մենք պեղել ենք ընդամենը 10 հեկտարը, նույնն է՝ մարդու մի աչքի բիրը տեսնես միայն:

Չրուցեց Ալիսա Հովհաննիսյանը

Մինգապուրի ջրի մաքրությունը՝ հայ ինժեներների մշակած համակարգով

National Instruments-ի հայաստանյան մասնաճյուղի ինժեներները Մինգապուրի խմելու ջրի վերահսկողության համակարգ են ստեղծել: Ընկերության մասնագետ Արամ Սողոյանը NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում նշեց, որ համակարգը ստեղծել են շուրջ 15 ամսվա ընթացքում եւ ավարտին հասցրել այս տարվա ապրիլին:

SCADA տեսակի համակարգը տեղադրվել է Մինգապուրում, ջրագոման խոշորագույն սարքավորումներից մեկի վրա: Դրա վիրտուալ մոդելը ներկայացվել է Երևանում անցկացվող DigiTec տեխնոլոգիական ցուցահանդեսի ժամանակ:

«Այնտեղ խմելու ջուրը շատ բարդ է մշակվում. ախտազերծում, գոտում, հավելումներ: Տեխնոլոգիայի հստակությունից կախված է միլիոնավոր մարդկանց անվտանգությունը: Այդ պատճառով մենք առավելագույն ուշադրություն ենք դարձրել տեխնոլոգիական հանգույցների պահեստավորմանը: Հիմնական որևէ հանգույցի խափանման դեպքում պահուստային ինքնուրույն գործի է դրվում առավելագույնը 5 միլիվայրկյան անց», - պարզաբանեց Սողոյանը:

Ավտոմատացումը Մինգապուրի ջրամատակարարման օպերատորին օգնել է մի շարք հարցեր լուծել, այդ թվում՝ ամոնյակի եւ քլորի անջատման խնդիրները: Դա օգնում է ոչ միայն մաքրել ջուրը, այլև չգերազանցել ախտազերծող հավելումների մատակարարման չափը:

Հավելենք, որ DigiTec ամենամյա ցուցահանդեսի կազմակերպիչը Հայաստանի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունն է (UITE):

Մասիսում եկեղեցի է բացվել. Մասնակցել է նաև Սերժ Սարգսյանը (ֆոտո)




Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ներկա է գտնվել Մասիս քաղաքի նորակառույց Սուրբ Թադեոս եկեղեցու

օժանդակությամբ՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Եկեղեցու հիմնարկերը կատարվել է 1991թ.-ին, 2005թ.-ից եկեղեցու շինարարական աշխատանքների պատասխանատվությունը ստանձնել է ազգային բարերար Հրանտ Վարդանյանը, սպա կառուցման աշխատանքները շարունակվել են նրա որդիների կողմից: Եկեղեցու ճարտարապետն է Անահիտ Թարխանյանը:

Հայաստանում արտադրվող լաբորատոր ստենդներն արտահանվում են 60 երկրներ



Հայաստանյան լաբորատոր ստենդները, որոնք արտադրում է «Ինտեգրատոր» ԲԲԸ-ն, արտահանվում են 60 երկրներ: Այդ մասին NEWS.am-ի թղթակցին հայտնել է ընկերության ներկայացուցիչ Վասպուր Մարգարյանը Երևանում անցկացվող DigiTec տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդեսի ընթացքում:

Ընկերությունը ուսումնական ստենդներ է արտադրում (հիմնականում բուհական) ինժեներական մասնագիտությունների համար, այդ թվում՝ էլեկտրատեխնիկայի, պլեհավաքների, սինխրոն եւ ասինխրոն շարժիչների (այդ թվում՝ ծանրաբեռնվածությամբ), ինչպես նաև՝ նյութերի դիմադրության, մեխանիկական միացումների, դուրգամային եւ եռակցային միացումների ուսումնասիրման համար:

Ստենդները կարելի է միացնել նաև համակարգչին, որի վրա հնարավոր է տեսնել եւ պահպանել պարամետրերը:

«Մենք աշխատում ենք 2008 թվականից: Հիմնականում արտահանում ենք Ռուսաստան, բայց եղել են մատակարարումներ նաև Սաուդյան Արաբիա, Ֆիլիպիններ, Նոր Զելանդիա՝ հավանաբար նրա համար, որ անընդհատ նույն բանը չենք առաջարկում: Չէ՞ որ ներկայում կրթական ծրագրերն անընդհատ փոփոխվում են», - հավելել է նա:

Ամենամյա DigiTec ցուցահանդեսի կազմակերպիչը Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների միությունն է (UITE):

Լոռեցի հրաշամանուկը. 7-ամյա Սարիբեկը 6 ռեկորդի հեղինակ է

7-ամյա Սարիբեկ Մոսիկյանին Վանաձորում շատերն են ճանաչում: Նրա կատարած ռեկորդային վարժությունների համար լոռեցիները փոքրիկին դեռ տարիներ առաջ են կնքել հրաշամանուկ անունով:

Առաջին ռեկորդը Սարիբեկը սահմանել է 5 տարեկանում՝ 2013թ., գարնացնելով ոչ միայն համաքաղաքացիներին, այլև հայաստանյան «Դյուցազնագրի» կազմակերպիչներին: Կատարելով 1111 կքանիստ 32 րոպեում, նա գրանցել է իր առաջին ռեկորդը «Դյուցազնագրում»:



Ֆրանկոֆոնիայի երկրները համագործակցելով կայաքարեն ցեղասպանությունների դեմ



«Սարիբեկն ի վերուստ ասվածատուր ուժ ուներ: Երբ 4 տարեկանը լրացավ, սկսեց գնալ կարատեի պարապմունքների: Այնտեղ կքանիստ վարժությունն էին սովորել, որն ինքը պարբերաբար կատարում էր տանը: Մի օր էլ, երբ սկսեցի հաշվել նրա կքանստումները, տեսա, որ զարմանալիորեն շատ է կատարում: Մեկ-երկու շաբաթ աշխատելով, կքանստումների թիվը հասցրինք 1000-ի», - պատմում է հայրը՝ Արեն Մոսիսյանը:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրները միմյանց հետ համագործակցելով կայաքարեն ցեղասպանությունների դեմ: Այս մասին հայտարարել է Մենեգալի ԱԳ նախարար Մանկեր Նդիայեն՝ Երևանում Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության երկրների ԱԳ նախարարների երկօրյա համաժողովի ամփոփիչ ասուլիսի ժամանակ:

Հայր ու որդի ջանասիրաբար աշխատելով երեք տարվա ընթացքում սահմանել են 6 ռեկորդ, որոնք ևս տեղ են գտել «Գյուցագնազրքում»: 70 կքանիստ անընդմեջ՝ 1 րոպեում, 2013 կքանիստ անընդմեջ՝ 57 րոպեում, երկու ձեռքերի երեք մատերի վրա հենում ծալում վարժություն 83 անգամ՝ 1 րոպեում, 1070 կգ-ոց մեքենայի հրում հետնամասից երկու ձեռքերով 44 մետր... Սարիբեկի սահմանած վերջին ռեկորդը՝ ուղևորներով հանդերձ 1273 կգ կշռող «Լադա» մակնիշի մեքենան 44 մետր առաջ հրումն է 2014թ. ապրիլին: Այդ օրը Սարիբեկի ռեկորդին միացել է նաև եղբայրը՝ 4-ամյա Ալենը, որը մեքենան հրել է 40 մետր: Թեև որդին մի քանի ռեկորդ է սահմանել, սակայն Մոսիսյանների երազանքը կքանստման ռեկորդի գրանցումն է «Գինեսի» ռեկորդների գրքում: «Ուզում եմ գրանցվեմ աշխարհի ռեկորդների գրքում, որպեսի բոլորն ինձ ճանաչեն ու իմանան, թե հայերն ինչքան ուժեղ են», - ասում է Սարիբեկը: Ռեկորդը գրանցելու համար սակայն, մի քանի կարևոր պայմաններ են անհրաժեշտ, ինչն ապահովելու համար ընտանիքը ֆինանսական հնարավորություն չունի:

Շնորհակալություն հայտնելով հայկական կողմին բացառիկ ջերմ ընդունելության և Երևան այցելելու հնարավորության համար, նախարարն ընդգծել է, որ համաժողովը հաջող անցավ:

Նախարարական հանդիպման մասնակիցները քննարկել են բազմաթիվ կարևոր հարցեր, ընդունվել են 5 կարևոր որոշումների վերաբերյալ նախագծեր՝ Ֆրանկոֆոնիայի տարածքը վերածել խաղաղության և հանդուրժողականության տարածքի, կանխել ցեղասպանությունները, կլիմայական փոփոխությունները, միգրանտների խնդիրը, ֆրանկոֆոնիայի արժեքների տարածման հարցում երիտասարդության մասնակցություն, ինչպես նաև նախարարական համաժողովի նախագահության անցում Մենեգալից Մադագասկարի:

ՖՄԿ գլխավոր քարտուղար. Միանում ենք Հայաստանի ցավին և ուժին

Մենք միանում ենք Հայաստանի ցավին և ուժին: Երևանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) արտգործնախարարների երկօրյա համաժողովի արդյունքներով կայացած մամուլի ասուլիսում այս մասին հայտարարեց կազմակերպության գլխավոր քարտուղար Միքայելյա ժամը:

Չնայած առկա դժվարություններին, ընտանիքը հաստատակամ է նոր ռեկորդներ սահմանելու հարցում ու հույսով, որ կգտնվեն աջակիցներ՝ լոռեցի հրաշամանուկին աշխարհին ճանաչելու դարձնելու հարցում:

Նա նշեց, որ այսօր առավոտյան Երևանում գտնվող պատվիրակությունների անդամներն այցելել են Հայոց ցեղասպանության զոհերի Ծիծեռնակաբերդ հուշահամալիր:

«Այդ վայրը հիշեցնում է այն ցավի և տառապանքի մասին, որն ապրել է հայ ժողովուրդը: Եվ հուշարձանի՝ դեպի երկինք խոյացած նետը խորհրդանշում է այն ուժը, որը միավորում է ժողովրդին՝ լավագույն ապագայի հասնելու համար: Մենք միանում ենք դրան: Միանում ենք հայ ժողովրդին ցավին ու տառապանքին: Նաև միանում ենք նրա ուժին: Դրանով Հայաստանը բացառիկ դեր ունի ֆրանկոֆոնիայի ընտանիքում», - նշեց Միքայելյա ժամը:

Գայանե Մարգարյան

Ֆրանկոֆոնիայի երկրների պատվիրակները ծաղիկներ են դրել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում



Միջազգային պատվիրակության անդամները, որոնք Հայաստան են մասնակցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրների ԱԳ նախարարների 31-րդ նստաշրջանի համաժողովին, այսօր՝ հոկտեմբերի 11-ին, այցելել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիր: Նրանց ուղեկցել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ու Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը ([Ֆոտոռեպորտաժ](#)):

Ֆրանկոֆոնիայի 80 երկրների պատվիրակությունների անդամները ծաղիկներ են դրել անմար կրակի մոտ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհերի հիշատակին:

Արարատ լեռան գեղեցիկ տեսարանի ֆոնին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության համաժողովի անդամներն «ընտանեկան» լուսանկար են արել Էդվարդ Նալբանդյանի գլխավորությամբ:

Քվերեկի միջազգային հարաբերությունների և Ֆրանկոֆոնիայի հարցերի նախարար Քրիստին Մեն-Պիեռը և Քվերեկի Ազգային ժողովի նախագահ Շակ Շակյոնը Էդվարդ Նալբանդյանին են հանձնել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին փաստաթղթի պատճենը: Վերջինս էլ այն փոխանցել է Հայկ Դեմոյանին՝ թանգարանում պահելու համար:

Նշենք, որ Ֆրանկոֆոնիայի համաժողովը համընկել է Երեւանի 2797-ակյանի տոնակատարությունների հետ:

Էդվարդ Նալբանդյան. Ֆրանկոֆոն երկրները պետք է մեկտեղեն ջանքերը՝ ցեղասպանությունները կանխելու համար

Հարկավոր է մեկտեղել ջանքերը՝ մարդկության դեմ նոր հանցագործություններ, նոր ցեղասպանություններ թույլ չտալու համար: Երեւանում կայացած Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) արտգործնախարարների երկօրյա համաժողովի արդյունքներով կայացած մամուլի ասուլիսում այս մասին հայտարարեց Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Պատասխանելով հարցին, որ համաժողովի շրջանակում ընդունված ամփոփիչ փաստաթղթերից մեկը վերաբերում է ցեղասպանությունների կանխարգելմանը, Նալբանդյանը նշեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ՖՄԿ այդպիսի վերաբերմունքի հատուկ կարևորությունը:

Նախարարի խոսքով, կարևոր է, որ բոլոր երկրները սատարեցին նախաձեռնությունը: «Խոսքն այն կարևոր հաղորդագրության մասին է, որը Հայաստանը հասցեագրում է ամբողջ աշխարհին. չի կարելի նոր հանցագործություններ, նոր ցեղասպանություններ թույլ տալ, հարկավոր է մեկտեղել ջանքերը», - ընդգծեց Էդվարդ Նալբանդյանը՝ հիշեցնելով, որ ֆրանկոֆոնիայի մեծ ընտանիքը միավորում է աշխարհի պետությունների ավելի քան մեկ երրորդին:

Հայոց ցեղասպանության հարցը նոր փուլ է մտնում. ճանաչումից՝ փոխհատուցում



Այսօր Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության հարցը նոր փուլ է մտնում. Ցեղասպանության փաստի ճանաչումից գիտական հասարակությունը անցում է կատարում փոխհատուցման պահանջին:

Գիտական հիմնավորման նախապատրաստումը այսօր մեկնարկած «Հայոց ցեղասպանություն-100. ճանաչումից փոխհատուցում» թեմայով կոնֆերանսի հիմնական թեմաներից է: Այս մասին [NEWS.am](#)-ի թղթակցի հետ զրույցում ասաց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը:

Նրա խոսքով կոնֆերանսում խմբերից մեկի աշխատանքը նվիրված է լինելու պահանջների փաթեթ ձևավորելուն և Ցեղասպանության հետևանքները վերացնելուն, ինչը հատկապես կարևոր է ճանաչումից փոխհատուցման պահանջին անցնելու կապակցությամբ:

Կոնֆերանսին ներկա էին ոչ միայն հայ մասնագետներ, այլ նաև այլ երկրների գիտնականներ, որոնք ուսումնասիրում են Հայոց ցեղասպանությունը: Յասմին Դոււմ-Թրագույը, օրինակ, ղեկավարում է Չալցբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնը և արդեն մի քանի տարի զբաղվում է Հայոց պատմության ուսումնասիրությամբ: [NEWS.am](#)-ի թղթակցի հետ զրույցում նա նշեց, որ աշխարհում կան ցեղասպանության մասին դեռ շատ հետաքրքիր և չիրապարակված նյութեր, և ինքը հույս ունի կոնֆերանսում լսել ինչ-որ նոր բան և նոր բացահայտումներ տեսնել:

Միջիգանի համալսարանի հայագետ Գեուրգ Բարդակչյանը նույնպես հույս է հայտնել կոնֆերանսում ինչ-որ նոր բան լսել կամ հայտնի փաստերին նոր աչքով նայել: Իր ելույթում նա կանդորադառնա Հիտլերի հռետորական հարցին (Ո՞վ է հիմա հիշում հայերի մասին) նոր տվյալների և նյութերի լույսի ներքո:

Գերմանացի պատմաբան Մայքլ Հասեմանը, որը վերջերս գիրք էր գրել Հայոց ցեղասպանության մասին, նշել է, որ

կոնֆերանսը հիանալի հնարավորություն է նոր տեղեկություններ տրամադրելու համար: Ռուբեն Սաֆրաստյանի խոսքով՝ կոնֆերանսի մասնակիցներն իրոք հնարավորություն կստանան լսել զեկույցներ, որոնք հիմնված են նոր, նախկինում անհայտ արխիվային նյութերի վրա: «Ցեղասպանությունը շատ բարդ պատմական երևույթ է: Այնպես չէ, որ թուրքերը եկան եւ բոլորին սպանեցին: Շատ հարցեր կան՝ կապված գանգվածային ջարդերի նախապատրաստման, ծրագիրն իրականացնելու մեթոդների ինչպես նաեւ այն բանի հետ, թե ինչպես էին օգտագործվում ռեսուրսները նպատակին հասնելու համար: Շատ կարեւոր է հասկանալ, թե ինչպիսին էր այն ժամանակ դիվանագիտական միջավայրը», - նշեց ակադեմիկոսը: Նա կարծում է, որ հենց այդ պատճառով պատմաբաններն ու թուրքագետները դեռ շատ աշխատանք պետք է կատարեն Ցեղասպանության խորը եւ զանգվածային ուսումնասիրության համար: Իրոք, հիմա հետազոտողները աշխատում են արդեն այլ ուղղությամբ. նրանք փորձում են հասկանալ ոչ թե այն, թե եղել է արդյոք Ցեղասպանությունը թե ոչ, այդ փուլն արդեն անցյալում է, պատմաբանները ընդունում են Ցեղասպանության փաստը: Այսօր գիտնականները փորձում են ավելի խորը հասկանալ մարդկության դեմ այդ հանցագործության էությունը, քանի որ դա կարող է կանխել նման հանցագործությունները սպազայում:

Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների զարգացման համար պետք է որոշակի ծրագրեր մշակել. Չահանգիրի



ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը հոկտեմբերի 15-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության առաջին փոխնախագահ Էսհադ Չահանգիրիի գլխավորած պատվիրակությանը: Ողջունելով հյուրերին ՀՀ Ազգային ժողովում Գալուստ Սահակյանը նշել է. «Պատմության ողջ ժամանակահատվածում հայ-իրանական սերտ առնչությունների գրավականներից մեկը եղել է մշակույթը եւ մշակութային ժառանգության հանդեպ ցուցաբերած հոգատար վերաբերմունքը: Իրանի Իսլամական Հանրապետության հետ ձեւավորվել են բարիդրացիական հարաբերություններ՝ խարսխված փոխկապակցության ամուր հիմքերի վրա: Այսօր առանց վարանելու կարելի է փաստել, որ հայ-իրանական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա»:

ԱԺ նախագահը երկկողմ համագործակցության շրջանակում կարեւորել է տնտեսական հարաբերությունների մակարդակի բարձրացումը, որը հնարավորություն կընձեռի օգտագործելու տնտեսական համագործակցության ամբողջ ներուժը: ԱԺ նախագահի խոսքով՝ Հայաստանը բարձր է գնահատում հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած ԻԻՀ իշխանությունների ջերմ վերաբերմունքը, որի դրսևորումներից են նաեւ Իրանի տարածքում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ հոգատարությունը եւ պահպանման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Խորհրդարանի ղեկավարը նշել է, որ հայ-իրանական համագործակցությունը նպաստում է տարածաշրջանային խաղաղության եւ կայունության ամրապնդմանը. հակամարտությունների եւ ճգնաժամերի ընթացքում Հայաստանի եւ Իրանի իշխանություններն աչքի են ընկել հավասարակշռված եւ շրջահայաց մոտեցումներով: Գալուստ Սահակյանը հույս է հայտնել, որ Էսհադ Չահանգիրիի այցը նոր խթան կհանդիսանա երկկողմ փոխշահավետ համագործակցության ամրապնդման համար: Իրանի Իսլամական Հանրապետության առաջին փոխնախագահ Էսհադ Չահանգիրին նշել է, որ այսօր երկու բարեկամ երկրների պատմամշակութային եւ քաղաքական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա: Ըստ պարոն Չահանգիրիի՝ դրա վառ օրինակը բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցերն են: Անդրադառնալով Իրան-Հայաստան տնտեսական համագործակցությանը՝ Էսհադ Չահանգիրին նշել է, որ տնտեսական հարաբերությունների զարգացման համար պետք է մշակել որոշակի ծրագրեր եւ օգտագործել առկա ներուժը: Եվ այսօր կայանալիք գործարար համաժողովը կարող է դառնալ առաջին քայլը: Իրան-Հայաստան տնտեսական համագործակցության շրջանակում ԻԻՀ առաջին փոխնախագահը փաստել է, որ ԵՏՄ երկրներից Հայաստանը միակն է, որ Իրանի հետ ցամաքային ճանապարհ ունի, եւ այդ փաստը կարող է լավ հնարավորություններ ստեղծել բարեկամ երկրների գործարարների համար: Պարոն Չահանգիրին անդրադարձել է նաեւ Սիրիայում, Եմենում, Իրաքում տեղի ունեցող արյունահեղ իրադարձություններին՝ կարեւորելով տարածաշրջանի երկրների դերը ծայրահեղականների գործողությունների կանխման եւ խաղաղության վերահաստատման գործում: Նա նշել է, որ միջազգային աստիճանում պետք է լսելի դարձնել տառապյալ ժողովուրդների ձայնը: Էսհադ Չահանգիրին անդրադարձել է նաեւ Իրանի նահանգների եւ Հայաստանի մարզերի միջեւ արդյունավետ համագործակցությանը՝ նշելով, որ սա կարող է ավելի խոր շփումների նախադրյալ դառնալ: Ընդգծելով բարեկամ երկրների խորհրդարանների դերակատարումը հարաբերությունների զարգացման եւ խորացման գործում՝ Էսհադ Չահանգիրին իր երախտագիտությունն է հայտնել միջազգային աստիճանում Իրանին աջակցելու համար:

Իրանի էներգետիկայի նախարար. Նոյեմբերին Թեհրանում տեղի կունենա հայ-իրանական գործարար համաժողով
 Անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները հայ-իրանական տնտեսական եւ առևտրական հարաբերությունների զարգացման համար՝ երկկողմ ապրանքափոխանակության ավելացման նպատակով: Այդ

մասին հոկտեմբերի 15-ին հայ-իրանական գործարար համաժողովի ընթացքում հայտարարել է Իրանի էներգետիկայի նախարար Հոմիդ Չիթչինը:

Նա համոզվածություն է հայտնել, որ միջոցառումը դրական նշանակություն կունենա առևտրական հնարավորությունների ի հայտ բերման տեսանկյունից: Նախարարի խոսքով, տարածաշրջանում եւ աշխարհում Իրանի սկզբունքային քաղաքականությունը հիմնված է բոլոր երկրների հետ հարաբերությունների զարգացման վրա: «Վստահաբար կարելի է ասել, որ բարձր մակարդակի քաղաքական հարաբերությունները նպաստում են երկրների միջև ավելի մեծ ինտեգրացիային:

Որպես հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ, կարծում եմ, որ անհրաժեշտ է բոլոր հնարավորություններն օգտագործել տնտեսական եւ առևտրական հարաբերությունների զարգացման համար՝ երկկողմ առևտրաշրջանառության ավելացման նպատակով: Խնդրին հետևում են համապատասխան ատյանները», - նշել է Հոմիդ Չիթչինը: Նա հավելել է, որ նոյեմբերին Թեհրանում գործարար համաժողով կանցկացվի, որի ընթացքում կօգտագործվեն հայ-իրանական տնտեսական համագործակցության հետագա զարգացման բոլոր հնարավորությունները:

Նրա խոսքով, ներկայումս ներդրումների համար բարենպաստ պայմաններ են ստեղծված ինչպես առևտրի ոլորտում, այնպես էլ զբոսաշրջության, մաքսատների, հիդրոէներգետիկայի, նավթի եւ իրանական գազի: «Այդ ոլորտները գրավիչ են մասնավոր սեկտորի համար: Բազմաթիվ փաստաթղթերի ստորագրմամբ բարենպաստ դաշտ է ստեղծվում երկու երկրների մասնավոր սեկտորների համագործակցության համար», - ամփոփել է Իրանի էներգետիկայի նախարարը:

Արցախում Մատենադարան են կառուցում



Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հոկտեմբերի 19-ին այցելել է Գանձասարի վանական համալիրի հարեւանությամբ կառուցվող Մատենադարանի շենք եւ ծանոթացել իրականացվող աշխատանքներին:

Երկրի ղեկավարն այնտեղ հանդիպում է ունեցել Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրեն Հրայր Թամրազյանի եւ հաստատության մի խումբ գիտաշխատողների ու մասնագետների հետ:

Նախագահը գոհունակությամբ նշել է, որ աշխատանքները մտել են վերջնական փուլ, եւ շուտով այս կարևոր գիտամշակութային կենտրոնը կսկսի իր աշխատանքը:

Բակո Սահակյանը երախտագիտություն է հայտնել Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենին եւ աշխատակիցներին՝ մշտական աջակցության համար՝ նշելով, որ առանց նրանց բարձր մասնագիտական եւ հայրենասնվեր գործունեության անհնարին կլիներ հաջողությամբ իրականացնել արցախյան Մատենադարանի հիմնադրման աշխատանքները:

[Մուրթ Հայաստանից - NEWS.am](http://NEWS.am)

Թուրքիա այցելող հայաստանցիների թիվը խիստ նվազել է 2015-ի հունվարից օգոստոս ամիսներին



Թուրքիա այցելող հայաստանցիների թիվը 2015-ի հունվարից օգոստոս ամիսներին կազմել է 33 708 հոգի:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2015-ի օգոստոսին Թուրքիա է այցելել 8 170 հայաստանցի, ինչը 26 տոկոսով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Նախորդ տարի հունիսին Թուրքիա էր այցելել 6 424 հայաստանցի:

Իսկ 2015-ի հունվարից օգոստոս ամիսներին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը նախորդ տարվա համեմատ նվազել է 29 տոկոսով՝ կազմելով 33 708 հոգի: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում Թուրքիա էր այցելել 47 591 հայաստանցի:

Արևմտյան Հայաստան

Դիարբեքիում թուրք ոստիկանները կրակել են հայկական եկեղեցու ցուցանակի վրա

Թուրքիայի Դիարբեքի քաղաքի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու ցուցանակը եւ պատը վնասվել են թուրք ոստիկանների կրակոցներից:


Դիարբեքիի հայերի միջոցներով ու Դիարբեքիի քաղաքապետարանի աջակցությամբ վերանորոգված հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին վերջին թուրք-քրդական բախումների ժամանակ դարձել է թուրք ոստիկանների թիրախը:

Թուրք ոստիկանները, օգտվելով փողոց դուրս գալու արգելքի սահմանումից Սուրբ շրջանում, անկանոն կրակահերթեր են արձակել Սուրբ կիրակոս եկեղեցու ցուցանակի վրա, որի վրա գրված է «Սուրբ Կիրակոս Հայոց եկեղեցի, Տիգրանակերտ»:

Բախումների ժամանակ վնասվել են նաև մզկիթներ, ինչպես նաև թալանվել է Դիարբեքի կաթոլիկ հայկական եկեղեցին:



Արևմտյան Հայաստանում ծպտյալ հայերն իրար «մերոնքական» են անվանում. թուրք գրող



Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ փաստավավերագրական գրքերի հեղինակ, ազգությամբ թուրք, Քեմալ Յալչընը 1915թ. հայերի կոտորածից հետո Արևմտյան Հայաստանում ապրող ծպտյալ հայերի մասին 2 գիրք է գրել՝ «Մարր Աեալին» և «Մերոնքականներ»:

NEWS.am-ի հետ զրույցում Քեմալ Յալչընը նշեց, որ ծպտյալ հայերի մասին գիրք գրելու համար 3 անգամ եղել է Արևմտյան Հայաստանում, գտել դավանափոխ հայերի և ներկայացրել նրանց պատմությունը: «Արևմտյան Հայաստանում կա մի քանի միլիոն դավանափոխ հայ, որոնք վերջին տարիներին արդեն սկսել են բարձրաձայնել, որ հայ են: Այնտեղ ծպտյալ հայերն իրար անվանում են «մերոնքական», այսինքն՝ հայ և. հենց այդ բառով էլ կարողանում են ամբողջի միջից ճանաչել իրար: Հենց «մերոնքականներին» էլ գտել եմ, գրուցել նրանց հետ, լսել պատմություններն ու դրանք գրել դավանափոխ հայերի մասին պատմող իմ գրքերում», -ասաց Քեմալ Յալչընը: Նշենք, որ 25-ից ավելի գրքերի հեղինակ թուրք գրող Քեմալ Յալչընը առաջին անգամ է Հայաստանում:

1990թ. հայկական հարցին նվիրված գրքերի հրատարակող Քեմալ Յալչընը ծնվել է 1952թ. Թուրքիայի Դենիզլի քաղաքում: Թուրքիայում իր հակակառավարական քաղաքական գործունեության պատճառով ստիպված է եղել փախչել Գերմանիա, ուր 1981թ. ստացել է քաղաքական ապաստանի իրավունք, Թուրքիա կարողացել է այցելել միայն 13 տարի անց: Նա ապրում է Գերմանիայում և Բոնի քաղաքում աշխատում որպես ուսուցիչ:

Միյունք

Ստամբուլում 53 տարի անց նոր հայկական դպրոց է բացվել



Ստամբուլի հայկական համայնքին պատկանող 171-ամյա Դադյան դպրոցի նոր մասնաշենքն ընդունել է աշակերտներին:

Թուրքական Gazetevatan կայքի փոխանցմամբ՝ Ստամբուլի Բաքրըջոյ թաղամասի հայկական Սուրբ Աստվածածին հիմնադրամի ղեկավարող 171-ամյա Դադյան դպրոցի նոր մասնաշենքը դռներն է բացել աշակերտների առաջ: Նոր շենքի ճարտարապետն է Նուբար Մանալյանը, ով մինչև նույն ժամանակ հիմնադրամի նախագահն է: Դպրոցի ընդհանուր տարածքը 6 հազար քմ է, որի մեջ են մտնում 16 դասարան, սպորտային դահլիճ, 300 հոգանոց կոնֆերենս սրահ, տարբեր լաբորատորիաներ, ճաշարան և այլն:

Ստամբուլի «Քամփ Արմեն» մանկատան սեփականության վկայականը հանձնվել է հայերին



Ստամբուլի հայ համայնքից թուրքական իշխանությունների կողմից խլված «Քամփ Արմեն» անունը կրող մանկատան սեփականության վկայականը հանձնվել է Ստամբուլի Գեղիկփաշայի հայկական բողոքական եկեղեցուն:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Գեդիկիփաշայի հայկական բողոքական եկեղեցու հիմնադրամի փաստաբան սերու Ավանգիլը հայտարարել է, թե մանկատան շենքի սեփականության վկայականի վերադարձի հետ կապված բոլոր աշխատանքներն ավարտված են եւ շենքն այժմ եկեղեցուն է պատկանում: Նշենք, որ Ստամբուլի «Քամփ Արմեն» մանկատունը 1987-ին գավթով է թուրքական իշխանությունների կողմից, այնուհետ վաճառվել թուրք գործարարի: Վերջինս էլ որոշել է քանդել մանկատունը եւ էլիտար տներ կառուցել: Հասարակական ճնշման արդյունքում մանկատան քանդումը ժամանակավորապես դադարեցվել է: Հիշյալ մանկատանն են մեծացել նաև Հրանտ Դինքը եւ նրա կինը՝ Ռաքել Դինքը: Մանկատան տարածքում ամիսներ շարունակ հերթապահում են հայ ակտիվիստները:

Միջազգային

Ջորջ Բլունի. Հայոց ցեղասպանությունն իրականացվել է 1915-ին, ոչ ոք չի վիճում այդ մասին



1915-ին հայերի նկատմամբ ցեղասպանություն է կատարվել, այդ հարցի վերաբերյալ ոչ ոք չի վիճում: Այդ մասին ասել է համաշխարհային հռչակ վայելող դերասան Ջորջ Բլունին Հարավային Քալիֆորնիայի հանրային ռադիոյի «The Frame» հաղորդմանը տված հարցազրույցում: «Հիմա պատմությունը փոխվել է, եւ թուրքերն այլևս չեն ուզում խոսել դրա մասին: Եվ քանի որ մենք Թուրքիայում ռազմական բազաներ ունենք, հանկարծ այդ նույն քաղաքական գործիչները, որոնք մինչ այդ ասում էին՝ «Այո, եղել է ցեղասպանություն», այսօր չեն կարող խոսել դրա մասին: Դուք դա չեք կարող ցեղասպանություն կոչել», - հայտնել է Բլունին: Դերասանի խոսքով, ինքը շատ սենատորների հետ է խոսել եւ հարցրել է, թե կարո՞ղ են այսօր խոսել Հայոց ցեղասպանության մասին: Օրենսդիրները պատասխանել են. «Բոլորովին չենք կարող, որովհետև Թուրքիան ահաբեկչության դեմ պայքարում մեր դաշնակիցն է»: Բլունին ընդգծել է, որ դերասանը չի կարող քաղաքականությամբ զբաղվել, բայց իրոք կարող է հարցեր բարձրացնել, որոնք իր համար նշանակություն ունեն:

Թուրքիան Ադրբեջանին 60 ռազմական զրոհային ուղղաթիռ կտրամադրի




Թուրքիան Ադրբեջանին ռազմական զրոհային AgustaWestland-TAI ուղղաթիռներ կտրամադրի: Ինչպես հաղորդում է haqain.az-ը, 60 ուղղաթիռի համար Ադրբեջանը կվճարի 3 միլիարդ դոլար: 2007 թվին իտալա-բրիտանական AgustaWestland ընկերությունը շահել է թուրքական ATAK (Attack and Tactical Reconnaissance Helicopters) տեղերը՝ AW129 բազայում թուրքական բանակին սպասարկող 51 ուղղաթիռի արտոնագրային արտադրության համար: Գործարքի արժեքը 2,7 միլիարդ դոլար է: Համաձայնագիրը նախատեսում էր թողարկվող ուղղաթիռների քանակը մեծացնել մինչև 91 միավորի: Արտադրությամբ զբաղվում է Turkish Aerospace Industries-ը: AgustaWestland-TAI-երը զինված են թուրքական Aselsan ֆիրմայի սարքավորումներով՝ կապի համակարգ, համակարգիչ, նավիգացիոն սարքեր եւ սենսորներ. դիտարկման եւ նշան բռնելու ջերմատեսողական AseIIFLIR-300T համակարգ, Milder ռադար: AgustaWestland-TAI-երի վրա նախատեսված է թուրքական Roketsan ընկերության Ստաս հրթիռների տեղադրում: Ուղղաթիռը զինված է երեք 20-միլիմետրանոց հրանոթներով, «օդ-երկիր» եւ «օդ-օդ» կարգի կառավարվող հրթիռներով եւ 80 միլիմետրանոց հրթիռների չկառավարվող բոկներով: Ուղղաթիռի վրա կտեղադրվեն նաև լրացուցիչ զինատեսակներ:

Անկարայի պայթյունը թուրքական իշխանություններն են կազմակերպել. Քուրդ կուսակցապետ



Թուրքիայի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության առաջնորդ Սելահաթին Դեմիրթաշը Անկարայում տեղի ունեցած հզոր պայթյունի կազմակերպման մեջ մեղադրել իշխանություններին: Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ Անկարայում հոկտեմբերի 10-ի խոշոր պայթյունից հետո խիստ ելույթով է հանդես եկել HDP-ի առաջնորդ Սելահաթին Դեմիրթաշը: Նա նշել է, թե պայթյունից հետո որևէ պաշտոնյա հրաժարական չի տվել, ինչը նշանակում է, որ բոլորը գոհ են տեղի ունեցածից: «Մա մեր իշխանությունների կողմից ժողովրդի հանդեպ իրանակացված հարձակում էր»,-ասել է Սելահաթին Դեմիրթաշը:

Հայտնի է դարձել Թուրքիայի քաղաքներում մզկիթների թիվը



Թուրքիայի խոշոր քաղաքներում մզկիթների թիվը հետաքրքիր պատկեր է ներկայացնում:

- Ստամբուլ- 3 269
- Ըոնիա- 3 115
- Անկարա- 2 955
- Մամսուհ- 2 674
- Քաթամոնու- 2 601
- Ամթալիա- 2 161
- Օրդու- 2 079
- Տրապիզոն- 1 994
- Դիարբեքիր- 1 968
- Իզմիր- 1 864
- Ուրֆա- 1 849
- Էրզրում- 1 572
- Ադանա- 1 417
- Վան- 1 367
- Մարաշ- 1 305
- Այնթափ- 970
- Խարբերդ-966
- Մալաթիա-940
- Բիթլիս- 692
- Արտվին-690
- Մուշ-588
- Երզնկա-575
- Կարս-504
- Արդահան-275
- Իգդիր-243
- Դերսիմ-92

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

Հասարակական

Բելառուսի դեսպան. Հայաստանը միայնակ չի մնա Ղարաբաղի խնդրի հետ



Հայաստանը միայնակ չի մնա ղարաբաղյան հսկամարտության հարցում: Նա իր գործընկերների, ՀԱՊԿ ընկերների և եղբայրների հետ է: [NEWS.am](http://www.news.am)-ի թղթակցի հետ զրույցում Հայաստանում Բելառուսի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Իգոր Նազարուկը իր երկրի տեսակետն է ներկայացրել ղարաբաղյան հսկամարտության գոտում լարվածության կապակցությամբ և անդրադարձել է հայ-բելառուսական տնտեսական հարաբերությունների հեռանկարներին, ինչպես նաև պատմել է Հայաստանից ստացած իր առաջին տպավորությունների մասին:

Ընդամենը մեկ ամիս է, ինչ Դուք Երևանում եք և պաշտոնապես ներկայացնում եք Բելառուսը մեր երկրում, բայց արդեն ակտիվ մասնակցում եք տարբեր միջոցառումների, հանդիպումներ եք անցկացնում: Գրածե՞ք մի փոքր Ձեր մասին:

Իրականում Բելառուսի բոլոր արտասահմանյան դիվանագիտական առաքելություններն ակտիվ են, և դա պայմանավորված է ոչ միայն դիվանագետի անձնական որակներով, այլ նաև այն հանգամանքով, որ մեր դիվանագիտությունը ստեղծագործ է: Առաջին հերթին դա ուղղված է կոնկրետ երկրի հետ ակտիվ համագործակցությանը: Երկրորդ հերթին դա աջակցում է մեր ձեռնարկություններին, մեր արտահանողներին՝ իրենց արտադրանքը արտաքին շուկա հանելու համար: Հայաստանը բացառություն չէ: Ինչ վերաբերում է ինձ, ապա նախքան դեսպանի պաշտոնին նշանակվելը ես ղեկավարում էի Բելառուսի ԱԳՆ արտաքին տնտեսական գործունեության դեպարտամենտը: Նախքան այդ երկար տարիներ աշխատում էի մաքսային մարմիններում, այսինքն՝ ըստ էության, զինվորական էի: Կոչումով փոխգնդապետ էի, գնդապետի կոչում ստանալուն 3 ամիս էր մնացել, երբ ինձ հրավիրեցին ԱԳՆ:

Ամուսնացած եմ: Մեծ աղջիկս մի քանի ամիս առաջ թոռնիկ պարգեւեց: Որոշեցին նրա անունը Կարինա դնել, ինչը ինձ համար զարմանալի էր, քանի որ ես նրանց չէի ասել, որ նշանակվում եմ Հայաստանում Բելառուսի դեսպան: Ես իմացել եմ, որ Կարինան Հայաստանում ամենատարածված կանացի անուններից մեկն է:

Վերջին ժամանակներս ադրբեջանական կողմը պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը:

Հայաստանի ՁՈՒ-ն վերջերս կանխեց սահմանը խախտելու Ադրբեջանի փորձը: Ձեր կարծիքով՝ որքա՞ն կարող է շարունակվել Բաքվի նման արկածախնդիր քաղաքականությունը, որը հակասում է միջազգային իրավունքի սկզբունքներին: Ինչպիսի՞ն է այս հարցում Բելառուսի դիրքորոշումը:

Բելառուսը հետխորհրդային երկրներից բոլորից լավ է հասկանում, թե ինչ տառապանքներ է կրել հայ ազգը, որ այդ տառապանքները շարունակվում են: Այդ տառապանքները ոչ մի դեպքում չպետք է շարունակվեն: Մեր նախագահը եւ կառավարությունը հենց խաղաղ կարգավորման կողմնակից են: Հրադադարի ռեժիմի խախտման կապակցությամբ ես միայն ափսոսանք կարող եմ հայտնել: Բելառուսի պաշտոնական դիրքորոշումը միշտ այն է եղել, որ կա ԵԱՀԿ Մինսկի խումբ, որը ստեղծվել է հակամարտությունը առավելագույնս կարգավորելու համար՝ աստիճանաբար նվազեցնելով լարվածությունը: Այժմ առիթ կա ակտիվացնել այս խմբի գործունեությունը՝ կոնկրետ, քննելի որոշումներ կայացնելու համար:

Ժամանակը չէ արդյոք, որպեսզի ԵԱՀԿ ՄԽ համանախագահները կոնկրետ հասցեավորված հայտարարություններ անեն՝ ադրբեջանական կողմի նման քայլերը կանխելու համար:

Ո՞ւմ համար է հակամարտությունը սրվում: Նշանակում է, որ կան ուժեր, որոնց դա ձեռնտու է: Ես չգիտեմ, որքանով են այդ մարդիկ առողջ դատում, որքանով են նրանք հոգեպես առողջ: Չէ՞ որ մարդու նորմալ վիճակը հանգիստն է, ուրախությունը, մերձավորների մասին հոգածությունը: Ներեցեք կրկնվելու համար, ծառ տնկելը, երեխաներ ծնելն ու տուն կառուցելն է: Բայց ոչ մի դեպքում հակառակը՝ ոչնչացնել տունը, սպանել երեխաներին եւ կտրել ծառը: Չէ՞ որ մարդը բնության մասնիկն է: Ուրիշ ո՞ր կենդանական արարածն է զանգվածաբար սպանում իր նմանների: Ես միզուցե իդեալիստ եմ, սակայն հիանալի հասկանում եմ, որ չարը կպատժվի: Ես կարծում եմ, որ հայկական հողի վրա կլինի խաղաղություն, հանգստություն, եւ ձեր ազգը վերջապես կհասնի այն արդար արժեքներին եւ այն հարգանքին, որը նա դարեր է հազարամյակներ շարունակ վաստակել: Ես անկեղծ հավատում եմ եւ ցանկանում եմ դա:

Հայաստանն ու Բելառուսը ԵՏՍ Կործնակերներ են: Առանձնացրե՞ք խնդրում են տնտեսության կոնկրետ ոլորտները, որտեղ երկկողմ հարաբերությունների զարգացման ներուժ կա:

Մենք հսկայական արդյունաբերական ներուժ ունենք: Մեր ինժեներները տեխնիկապես միանման են դատում, նրանք ստանդարտավորման միասնական դպրոց են անցել: Այդ պատճառով կան շատ լավ հեռանկարներ: Ես օրինակ հենց նոր էի եկել, եւ բառացիորեն հաջորդ շաբաթ կայացավ հայ-բելառուսական գիտատեխնիկական հանձնաժողովի նիստը: Նրանք որոշել են Մեւանում գիտական կենտրոն ստեղծել, որտեղ կգործի հայ-բելառուսական տեխնիկական կենտրոն:

Հայաստանը հիանալի բնակլիմայական պայմաններ ունի: Բնականաբար գյուղատնտեսական արտադրանքի մեծ հնարավորություն կա: Գաղտնիք չէ, որ մենք մեզ մոտ չենք կարող շատ մթերքներ անցնել՝ ելնելով կլիմայական առանձնահատկություններից: Այդ պատճառով ստիպված ենք գնել: Ես համոզվել եմ, թե որքան որակյալ է հայկական գյուղատնտեսական արտադրանքը: Միակ բանը, որը պակասում է, եւ սա քննադատություն չէ, այլ փաստի արձանագրում, գյուղատնտեսության մեխանիզացումն է: Բելառուսն ունի գյուղատնտեսական մեքենաների եւ գործիքների ամբողջ շարք: Հայաստանը կերակրում է իրեն,

իսկ հիմա պետք է, որ նա արտադրանք մատակարարի Ռուսաստան, Ղազախստան, Բելառուս եւ Ղրղզստան: Առավելապես պետք է զարգացնել արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, ֆինանսական, մշակութային ոլորտներում փոխհամագործակցությունը, կազմակերպել տարբեր մարզական միջոցառումներ, վերապատրաստումներ:

Եվ իհարկե չի կարելի մոռանալ, որ Բելառուսն ու Հայաստանը ՀԱՊԿ գործընկերներ են: Վառողը պետք է չոր լինի: Մենք ոչ ոքի չենք սպառնում, բայց ամեն դեպքում պետք է հստակ հասկանանք, որ աշխարհը շատ անկայուն է եւ շատ բարդ: Այդ պատճառով մենք պետք է պատրաստ լինենք իրադարձությունների ցանկացած զարգացման:

Ձե՞ք կարծում, որ ՀԱՊԿ-ը պետք է որեւէ դատապարտող հայտարարություն անի Ադրբեջանի հասցեին, որը պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը դարաբաղյան հակամարտության գոտում:

Բառացիորեն անցյալ շաբաթ Հայաստանում՝ «Բաղրամյան» հրաձգարանում, ՀԱՊԿ զորավարություններ կայացան: Մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի եւ մյուս անդամ երկրների բանակների ստորաբաժանումները: Բնականաբար նման միջոցառումների վրա է բեռնված հարեւան երկրների ուշադրությունը: Դա հստակ ուղերձ էր ամ այն, որ Հայաստանը այդ խնդրի հետ միայնակ չի մնա: Հայաստանի կողքին են իր գործընկերները, ընկերները, եւ կասեի եղբայրները: Այդ պատճառով, եթե պարզ ասենք, ապա դա հայտարարություն էր արտաքին աշխարհին այն մասին, թե ինչին կարող է բախվել ագրեսիան՝ հավաքական հետ մղման:

Ի՞նչն է Ձեզ Հայաստանում ամենից շատ դուր եկել:

Հայաստանի ճարտարապետությունը յուրահատուկ է: Այն հիմնված է բազմադարյա ավանդույթների վրա: Դա հայ ժողովրդի եւ արտաքին շրջապատի ներդաշնակության արտահայտումն է: Սակայն ցանկացած արժեք մարում է մարդկային արժեքների կողքին: Ինձ, անկեղծ ասած, ամենից շատ զարմացրին հենց հայերը: Չարմացրին իրենց հոգու գեղեցկությամբ, հպարտ հանգստությամբ: Աչքի է զարնում երեխաների նկատմամբ մեծ սերը: Միևնույն երբեք չես տեսնի, որ անձանդ մարդը մոտենա եւ ասենք շոյի քո երեխայի գլուխը: Այստեղ երեխաները շրջապատված են հասարակության սիրով: Մերն ու հանդուրժողականությունը ոչ միայն ձեր գեներում է, այլ արմատավորվում է եկեղեցու միջոցով:

Չրուցեց Տաթևիկ Ղազարյանը

Թուրքիայում իրենց ինքնությունը կորցրած հայերի անկեղծ պատմությունները. Մաս 2



Ռուսթեմ Բաբրըջբոլու, 33 տարեկան

Ընտանիքս Ադրբեջանում՝ Գերգերում է ապրում: Ծնողներս դեռ մզկիթ են գնում: Նրանք կապեր ունեն անգամ շրջանում

ամենահայտնի կրոնական խմբի՝ Մենգիի հետ: Անշուշտ բոլորն ամեն ինչ գիտեն: Ես, օրինակ, 12-13 տարեկան էի, երբ դպրոցում իմացա, որ հայ եմ: Քանի որ գյուղում դպրոց չկա, գիշերօթիկ դպրոցում եմ սովորել: Մի ընկեր վեճի ժամանակ ինձ «գյավուր» անվանեց, ես էլ անձնագիրս հանեցի ու ասացի. «Նայի՛ր, անձնագրում էլ է իսլամ գրվում»:

Բոլորը գիտեն, որ հայ եմ: Լավ, պետությունը Անձնագրերում իսլամ ձևակերպումը հայրս դեռ չի փոխել: Քանի որ պետական պաշտոնական վարչություններում լուրջ դժվարություններ կարող է ունենալ: Եթե անգամ պետության սահմանադրության մեջ առանց կրոնի, լեզվի, ռասայի խտրականության գրվեն, որ մեր բոլոր հայրենակիցները հավասար են, ոչ թուրքերը միշտ մի քայլ հետ են: Օրինակ՝ հորեղբայրս 25 տարի է, ինչ պետական պաշտոնյա է: Թեև լավ տիրապետում է իր գործին և ցանկանում է աշխատել դատավորների ու դատապաշտպանների հետ, այնուհանդերձ դեռ չի կարողացել իրականացնել այն, որ տնօրեն նշանակվի: Նորից հորեղբորս որդին, ով սովորել է իրավագիտության բաժնում և ավարտել լավ գնահատականներով, դատավորների-իրավապաշտպանների քննությունից էլ բարձր միավորներ է ստացել, սակայն դատավոր կամ իրավապաշտպան չկարողացավ դառնալ: Այսինքն՝ թեև անձնագրում իսլամ է գրված՝ այնուհանդերձ քեզ արժանի դիրքին չես կարողանում հասնել: Թեև դարեր է, ինչ այս երկրի քաղաքացի ես, բայց այս երկրում քո իրավունքը չես կարողանում ձեռք բերել:

Երբ գրանցումը նորացնելու համար գնացել էի Ազգաբնակչության վարչություն, թեև իմ թղթապանակում իսլամ էր գրված, վարչության պաշտոնյան հարցրեց՝ «Գրե՛մ քրիստոնյա»: Ասել է թե՛ սրանք պետության կողմից գրանցվում են և հայտնի են: Սակայն երբ ուզում ես հայկական դպրոց գրանցվել, պետությունը նորից մերժում է դիմումդ՝ ասելով՝ «Դու հայ չես»:

